



# COVID-19

# Փաստեր Պատվաստման Մասին

## ԻՆՉՈՐ՝ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ



- COVID-19-ի դեմ պատվաստանյութերն **անվտանգ և արդյունավետ են:**
- Պատվաստումը լավագույն միջոցն է, որպեսզի դուք և ձեր սիրելիները չհիվանդանաք, աշխատանքից չբացակայեք, չհայտնվեք հիվանդանոցում և չմահանաք:
- Պատվաստանյութերը պաշտպանում են Դելտա ենթատեսակներից: Դրանք նաև նվազեցնում են նոր և անգամ ավելի վտանգավոր ենթատեսակների առաջացման հավանականությունը:

## ՈՎԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

### 12 տարեկան և ավելի բարձր տարիքի ցանկացած անձ



Անվճար

- Պատվաստանյութերն **անվճար են** բոլորի համար, անգամ եթե չունեք ապահովագրություն:
- Ձեզնից չեն հարցնելու ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Պատվաստանյութերը խորհուրդ են տրվում 12 տարեկան և բարձր տարիքի բոլոր անձանց, ներառյալ հղի կամ կրծքով կերակրող, ինչպես նաև արդեն իսկ COVID-19-ով վարակված անձանց:
- Ալերգիա ունեցող մարդկանց մեծ մասը կարող է պատվաստվել:

## ԻՆՉՊԵՍ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Լուս Անջելեսի Շրջանում կան պատվաստման հարյուրավոր վայրեր. շատերը գործում են նաև շաբաթ և կիրակի օրերին և երեկոյան ժամերին և չեն պահանջում նախօրոք ժամադրում:



Ձեր համայնքում պատվաստման վայր գտնելու համար՝

- Այցելեք **VaccinateLACounty.com** կամ զանգահարեք **833-540-0473** հեռախոսահամարով առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը:
- Կարող եք զանգահարել նաև 2-1-1 հեռախոսահամարով, որտեղ տեղեկատվությունը հասանելի է բազմաթիվ լեզուներով՝ 24/7, կամ հարցնել ձեր բժշկին կամ տեղային դեղագործին:
- Հասանելի են նաև անվճար փոխադրում և տնային պատվաստում:

Անչափահաս անձանց պատվաստման համար պահանջվում է ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը:

## ՈՐ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ Միացյալ Նահանգներում

	<b>Pfizer</b>	<b>Moderna</b>	<b>Johnson &amp; Johnson</b>
Հասանելի է՝ Տրվում է՝	12+ տարեկան մարդկանց 2 դեղաչափով՝ 21 օր տարբերությամբ	18+ տարեկան մարդկանց 2 դեղաչափով՝ 28 օր տարբերությամբ	18+ տարեկան մարդկանց 1 դեղաչափով

Եթե դուք ունեք չափավոր կամ ծայրահեղ թուլացած իմունային համակարգ, ձեզ կարող է անհրաժեշտ լինել պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափ. խոսեք ձեր բժշկի հետ:



# COVID-19

# Փաստեր Պատվաստման Մասին

## ՈՐՈ՛ՆԷ ԵՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատվաստումների հետևանքով առաջացող կողմնակի ազդեցությունները կրում են սովորական բնույթ և կարող են ներառել թևի ցավ կամ կարմրություն, հոգնածության զգացողություն, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանային ցավ: Կողմնակի ազդեցությունների դրսևորումը չի նշանակում, որ դուք վարակված եք COVID-19-ով: Ոչ բոլորի մոտ են դրսևորվելու կողմնակի ազդեցություններ:
- Կողմնակի ազդեցությունները նշան են, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն**: Դրանք կարող են ազդել ձեր առօրյա գործունեության վրա, սակայն պետք է անհետանան պատվաստումից հետո մեկ կամ երկու օրերի ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները շատ հազվադեպ են և հիմնականում բուժելի:



## Ի՛ՆՉ ԿԱՍԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Դուք չեք կարող պատվաստանյութից վարակվել COVID-19-ով: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19 առաջացնող վիրուսը:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ մաշկի այլ գույն ունեցող, տարեց և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ դրանք անվտանգ են:
- Պահպանվել են պատվաստանյութի **անվտանգությանը և արդյունավետությանը** ուղղված բոլոր քայլերը:
- 2020 թվականի Դեկտեմբերից ի վեր **միլիոնավոր մարդիկ ապահով կերպով** պատվաստվել են COVID-19-ի դեմ:
- Չկան ապացույցներ, որ COVID-19-ի դեմ պատվաստումը առաջացնում է պտղաբերության հետ կապված խնդիրներ տղամարդկանց և կանանց մոտ: Հղիության հետ կապված մեր ունեցած բոլոր տեղեկությունները հուսադրող են: Գիտնականները շարունակում են ուշադրությամբ ուսումնասիրել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի կողմնակի ազդեցությունները և կիսվում են իրենց իմացած տեղեկություններով:

## ՊԱՏՎԱՍՏՎԵԼՈՒՑ ԴԵՏՈ

- Դուք **ամբողջովին պատվաստված** չեք, եթե չի անցել 2 շաբաթ Johnson & Johnson պատվաստանյութի ձեր մեկ դեղաչափը կամ Pfizer կամ Moderna պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո: Ժամանակ է պետք, որպեսզի ձեր մարմինը ստեղծի դիմադրողականություն:
- Ամբողջովին պատվաստվելուց հետո շարունակեք ձեռնարկել քայլեր՝ պաշտպանելու ձեզ և մյուսներին.
  - **Կրեք լավ ծածկող դիմակ**
  - Մնացեք տանը, երբ հիվանդ եք
  - Հաճախակի լվացեք ձեռքերը
  - Խուսափեք մարդաշատ և վատ օդափոխվող վայրերից
  - Պահպանեք հեռավորություն

